№ 112 Երեքշաբթի Հոկտեմբերի 6 1887 Երեքշաբթի Հոկտեմբերի 6 № 112

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ZIEGLER 18 1941

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նկարիչ Յովհաննէս Այվազովսկու յօբելեանի տօնախմբութիւնը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Գերմանիայից· Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ·—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·—ԲՕՐՍԱ·—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Ֆիզիկական աշխատանքի օգուտը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԻՉ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբերի 26-ին տօնվեցաւ մեր յայտնի հայազգի նկարիչ Յովհաննէս Այվազովսկու գեղարուեստական գործունէութեան յիսնամեայ յօբելեանը Պետերբուրգի Գեղարուեստական Ակադէմիայում։

Ակադեմիայի դահլիճում գրված էր Այվազովսկու կիսարձանը, դափնիներով զարդարված։ Հանդիսաւոր նիստին նախագահում էր Ակադեմիայի օգոստափառ նախագահ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։ Նախագահի աջ կողմը նստած էր ինքն յօբելեարը, ձախ կողմը ճարտարապետութեան ըէկտոր Ըէզանով և նկարչութեան ըէկտոր Շամշին։ Ներկայ էին՝ ազգային լուսաւորութեան մինիստր Դելիանով և հաղորդակցութեան ճանապարհների մինիստր Պոսիէտ։ Հասարակութեան մէջ նկատելի էին գիտութեան, գեղարուեստի և գրականութեան ամենայայտնի ներկայացուցիչները։

Նախ և առաջ Նորին Կայսերական Բարձրութիւնը յանձնեց յօբելեարին Բարձրագոյն շնորհված պատուանշանը և ողջունեց յօբելեարին ջերմ խօսքերով։

Այնուհետև Ակադէմիայի քարտուղար կարդաց Ակադէմիայի կողմից յօբելեարին ուղղված ուղերձը և ապա միմեանց ետևից սկսեցին ներկայանալ յօբելեարին այլ և այլ պատգամաւորութիւններ, կարդալով յօբելեարին իրանց ուղերձները։ Առաջինը ներկայացաւ Կայսերական Էրմիտաժի պատգամաւորութիւնը, այնուհետև հանդէս եկան հետևեալ պատգամաւորութիւնները. Պետերբուրգի համալսարանից, գեղարուեստներին նպաստող ընկերութիւնից, ռուսաց աշխարհագրական ընկերութիւնից, Պետերբուրգի դումայից, «Русская Старина» ամսագրից, Թէոդոսիայի քաղաքային վարչութիւնից, Պետերբուրգի հայոց համայնքից, Կայսերական թատրոնների արտիստներից, բեմական կարօտ գործիչներին նպաստող ընկերութիւնից, «Вѣстникъ изящныхъ искусствъ» ամսագրից, և Ռիգայի գեղարուեստական ընկերութիւնից։

Այնուհետև կարդացվեցան հետևեալ օգոստափառ անձինքներից ստացված շնորհաւորական հեռագիրները. Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչից, Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայևիչից, Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Իոսիֆովնայից և Մեծ Իշխանուհի Եւգենիա Մաքսիմիլիանովնայից։

Բացի սրանից հետևեալ անձինք և հիմնարկութիւններ ուղարկեցին շնորհաւորական նամակներ և հեռագիրներ. ծովային մինիստրը, Կարօսլավլի և Բոստովի եպիսկոպոս Յովհաննէս, Ֆլորէնցիայի գեղարուեստական ակադէմիան, Շտուտգարտի գեղարուեստական դպրոցը, Հռոմի գեղարուեստական ակադէմիան, Փարիզի ռուս գեղարուեստագէտները, Պետերբուրգի կանանց շրջանը, Մոսկվայի նկարչութեան դպրոցը, Լապարեան ճեմարանը, Մոսկվայի ֆիլարմոնիական ընկերութիւնը, Կերչի քաղաքային վարչութիւնը, Սիմֆէրոպոլի քաղաքային վարչութիւնը, Վարշավայի և Խարկովի գեղարուեստական հասատատութիւնները, Թէոդոսիա քաղաքի ուսումնարանները, Օդէսայի գեղարուեստների ընկերութիւնը, Օդէսայի նկարչութեան դպրոցը, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, Թիֆլիսի առևտրական կլուբը, «Մշակ» լրագրի խմբագրութիւնը, կոմս Լորիս-Մելիքովի, գեներալ Տիմաշեվ, գեներալ Զէրնիաեվ, նկարչութեան պրոֆէսոր Օրլովսկի և շատ ուրիշներ։ Մինչև երեկոյ ստացվեցան յօբելեարի անունով մի քանի հարիւր հեռագիրներ։ Ստացվեցան նմանապէս այլ և այլ տեղերից բազմաթիւ թանգագին ոսկեայ և արծաթեայ ընծաներ։

Օգոստափառ նախագահը բարևհաճեց ընծայել յօբելեարին իր սեփական կենդանագիրը, ոսկեզօծ շրջանակում։

Յօբելեարը սաստիկ զգացված էր, և տեղից վերկենալով նա, զիմելով Մեծ Իշխանին և հասարակութեանը, մի կարճառօտ, բայց զգացված ճառ ասեց, շնորհակալութիւն յայտնելով բոլոր ներկայ եղողներին։ Իր ճառը Այվազովսկի վերջացրեց այնպիսի նկարչական խօսքերով, որոնք կարծես վերցրած էին նրա նկարների էֆէկտներից. «Այս անմոռանալի րօպէն իմ կեանքիս մէջ, ասեց նա, ես կարող եմ միմիայն համեմատել արեգակի արշալոյսի հետ, որի ճառագայթներում միախառնվում են իմ ամբողջ կեանքիս բոլոր արկածները»։

Այվազովսկու ճառից յետոյ Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ մօտեցաւ յօբելեարին և համբուրեց նրան։

Այնուհետև բոլոր ներկայ գտնվածները անցան Ակադէմիայի միւս սենեակները Այվազովսկու պատկերները նայելու։ Այդտեղ հանդէս էին դրված հռչակաւոր նկարչի «Շտիլ» (ծովի հանդիստը) պատկերը, որի համար իր երիտասարդութեան ժամանակ Այվազովսկի ստացաւ առաջին անդամ ոսկեայ մէդալ և նրա վերջին հրաշալի «Պուշկին ծովի ափում» պատկերը, որ յօբելեարը ընծայեց բեմական կարօտ արտիստների օգնութեան ընկերութեանը։

Հասարակութեան մէջ էին և յօբելեարի ամուսինը, և նրա պսակված աղջիկը իր ամուսնով և երեխաներով։

Նոյն օրը տրվեցաւ նախկին գեղարուեստական կլուբի դահլիճում մի փառաւոր ճաշկերոյթ յօբելեարին։ Ճաշկերոյթին ներկայ էին 200-ից աւելի հիւրեր, որոնց թւում և բարձրաստիճան անձինք։ Ճաշի ժամանակ ասվեցան բազմաթիւ ճառեր և խմվեցան բազմաթիւ տօստեր. ճաշը անցաւ շատ ուրախ և վերին աստիճանի սրտաշարժ կերպով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказъ» լրագրում պաշտօնապէս հրատարակված է։ «Թիֆլիսի քաղաքային զինուորագրական ատեանը յայտնում է, որ իր գործունէութիւնը երիտասարդներին ծառայութեան մէջ ընդունելու համար սկսվում նոյեմբերի մէկից։ Այդ օրը առաւօտեան ժամը 8-ին Գոլովինսկի պրոսպեկտի վրա գտնվող ցիրկում պէտք է ժողովվեն. 1) այն անձինքը, որոնց տարիքը պէտք է որոշվեն արտաքին տեսքին նայելով համաձայն զին. օր. 109 և 112 յօդ. 2) այն անձինքը, որոնք համաձայն զին. օր. 217 և 118 յօդ. պէտք է ենթարկվեն ծառայութեան առանց վիճակահանութեան. 3) այն անձինքը, որոնց ծառայութիւնը յետաձգված է մինչև առաջիկայ զինուորագրութիւնը, և 4) բոլոր այն անձինքը, որոնք մտցնված են այս տարվայ զինուորակոչական ցուցակների մէջ, բացառութեամբ՝ ա) այն անձանց, որոնք ցուցակները կազմելուց յետոյ ընդունել են թէ օրթոդոքս և թէ ուրիշ քրիստոնէական դաւանութեան քահանայական կամ օրթոդոքս սաղմոսասողի պաշտօն, բ) այն անձանց, որոնք կարդում են ուսումնարաններ ձեռքին անքուն դիշերներ անցկացնել, ամեն տեսակ նեղութեան և արգելքների հետ կռուել անդադար, և այդ բոլորը միայն նրա համար, որ ապագայում, ուսումը վերջացնելուց յետոյ՝ մարդ պէտք է հպարտանայ, փող վաստակէ և այդ փողերով գեղեցիկ տներ, թանգագին կառքեր ունենայ։ Այսպիսի ողորմելի նպատակի համար չարժէ անդամ ուսում առնել....

Յօդուածի միտքը բուն առողջապահական է։ Ակայն այդ դիտութիւնը չէ արտայայտվում այստեղ անտարբեր և սառն կերպով, ինչպէս որ պատահում է դիտութեան «սոսկ» առաքեալների շարադրութիւնների մէջ։ Այստեղ դիտութիւնը ծառայում է՝ ինչպէս միջոց, որ ցոյց տայ մարդկային կեանքի հիւանդ և անմխիթար երևոյթները, որ նա, զործադրվելով կենսական հարցերի վրա, լուսաւորէ մարդկանց մտքերը և ցոյց տայ նրանց մոլորութիւնների գլխաւոր աղբիւրը։ Ցեսէք թէ ինչպէս է հասկանում հեղինակը առողջապահութեան նշանակութիւնը. «Կանոնաւոր ապրելու խնդիրը, կեանքը երկարացնելու՝ ապա ուրեմն և բաղդաւոր, խելացի, բարոյական կեանք վարելու խնդիրը—միշտ եռացող, կենդանի խնդիրներից մէկն է։ Մեր ժամանակվայ թուլամորթ, «ջղային» դարում՝ այդ խնդիրների մասին որքան կարելի է շատ խօսել և քարոզելը, իմ կարծիքով, առաջին պարտականութիւնն է՝ թէ բժշկի, թէ մանկավարժի և թէ մինչև անդամ աստուածաբանի։»

Առողջապահութիւն ասելով այստեղ հասկացվում է ոչ միայն մարմնի ֆիզիկական յատկութիւնների բարելաւութիւնը, այլ և այն բոլոր պայմանները, որոնք նպաստում են մարդու բաղդաւոր, խելացի և բարոյական կենցաղավարութեանը։ Բայց որովհետև մարդու կեանքի և բաղդաւորութեան գլխաւոր հիմքը նրա մարմնի առողջութիւնն է, ուստի ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել ֆիզիկական ոյժերի և նոցա կանոնաւոր զարգացման վրա։ Մարմնի ֆիզիկական զարգացումը գլխաւորապէս կախված է այն պայմաններից, թէ ինչպէս են կատարվում նրա մէջ կենսական—ֆիզիոլոգիական բոլոր գործողութիւնները։ Մեր մարմինը բնականից այնպէս է կազմված, որ նորա առողջութիւնը պաշտպանելու համար, անհրաժեշտ են որոշ ֆիզիոլոգիական գործողութիւններ, որոնց անկանոն և թոյլ կատարվելը միշտ առաջ է բերում և մարմնի անկանոն, հիւանդոտ զարգացումը։ Կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մշտական չարժողութիւն, մարմնի անդադար մաշվելու և նորոգվելու, լուծվելու և կազմվելու անվերջ գործողութիւն։ Քանի որ մարդը ապրում է, նրա մարմնի մէջ անդադար կատարվում են այդ քայքայման, լուծվելու և նորից ստեղծվելու գործողութիւնները։ Ապրել նշանակում է՝ շարունակ մաշել և շարունակ վերանորոգել իր մարմինը։ Բայց ինչպէս է կատարվում մեր մէջ այդ մաշվելու և նորոգվելու գործողութիւնը։ Մի կողմից մարմնի բոլոր գործողութիւնները, թէ ֆիզիկական և թէ հոգեկան, առաջ են բերում նորա մաշվելը. միւս կողմից, սննդառութեան միջոցով, մարմինը կարողանում է նորոգել իր մաշված տեղերը, լրացնել փչացած և անպէտք եղած մասնիկների փոխարէնը։ Ուրեմն մեր մարմնի մէջ կատարված գլխաւոր գործողութիւնները երկուս են. մարմնի գործողութիւն կամ գործունէութիւն և սննդառութիւն։ Որքան այս գործողութիւնները արագ և կանոնաւոր կատարվեն, այնքան էլ առողջ, կենդանի և թարմ է լինում մարմինը։ Ընդհակառակն, եթէ մարմնի սննդառութիւնը գերակշռէ նորա գործունէութեան վրա, այսինքն եթէ մարդ լաւ, սննդարար կերակուրներ ընդունէ և դորա փոխարէն ոչ մի գործով չը պարապի, նա կը հիւանդանայ այնպէս, ինչպէս և կը հիւանդանայ այն ժամանակ, երբ նրա մարմնի գործունէութիւնը գերակշռում է սննդառութեան վրա, այսինքն երբ մարդ աւելի շատ աշխատում, մաշում է իր մարմինը, քան թէ ուտում, լրացնում է նորա պակասորդը։

II

Մարմնի գործունէութեան եղանակը նոյնպէս մեծ ազդեցութիւն ունի նորա առողջութեան վրա։ Մեր ժամանակի քաղաքակրթութեան գլխաւոր թերութիւններից մէկն էլ այն է, որ մարդիկ, ոգևորվելով մտաւոր գործունէութեամբ, ընկան չափազանց ծայրայեղութեան մէջ և սկսեցին զարգացնել իրանց միտքը, անխնամ թողնելով մարմնի ֆիզիկական կանոնաւոր զարգացումը։ Սրա հետևանքը այն եղաւ, որ այժմեան քաղաքակիրթ երկիրներում կազմվեցաւ՝ մտաւորապէս զարգացած մարդկանց, ինտելիդէնցիայի ահագին կօնտինդէնտ, որ իր լոկ ուղեղի զարգացման շնորհով, կորցրել է մարմնի ֆիզիկական ոյժերը և այժմ ինքն էլ սարսափով նկատում է իր մարմնի անզօր թուլութիւնը։ «Մեր դարը հպարտանում է իր քաղաքակրթութիւնով գիտութիւնների և արուեստների առաջադիմութիւնով—ասում է բժ. Պեասկովսկի,—բայց դժբաղդաբար, այդ բոլորի հետ միասին, նրանում փայլում են՝ ֆիզիկական թուլութիւնը, ուղեղի և նեարդերի հիւանդութիւնների շատանալը, խելագուրկ և ջղային մարդկանց բազմաթիւ քանակութիւնը և, վերջապէս, այժմեան մարդու կեանքի չափազանց կարճանալը։» Եւ այս բոլոր միակողմանի մտաւոր աշխատութեան հետևանքն է։ Մարդիկ, իրանց մտաւոր գործողութիւնների մէջ խորասուզված, մարմնի ոյժերը նուազեցնելով, իրանց հասցրել են այն աստիճան բարակութեան, որ չեն կարողանում հասարակ, ամենաթեթև ոյժ գործ դնել՝ որ և է ֆիզիկական արգելք հեռացնելու համար։ Եւ այս շատ բնական, հասկանալի մի երևոյթ է։ Շարունակ ուղեղային գործողութիւնը կլանում է և մեծ քանակութեամբ իստակ, թթուածնով տոգորված արիւն և, այդպիսով, զրկում է մեր մարմնի միւս մասերը՝ մկանունքները, ոսկորները և այլն, հարկաւոր սննդարար նիւթից։ Անգործութեան մէջ մնալով, մեր մկանունքները հետզհետէ սկսում են թուլանալ և կորցնում են առատ արիւնով կերակրվելու ընդունակութիւնը։ Մկանունքների կանոնաւոր սնընդառութեան համար, անհրաժեշտ է, որ նրանք

ռում և որոնց զինուորական առեանը ժամանակ է տուել ուսումը աւարտելու համար և դ) այն անձանց, որոնք պայմանագրով ծառայում են առևտրական նաւերի վրա և որոնց ժամանակ է տրված իրանց ծառայութեան միջոցը լրացնելու համար։

—

Արդարադատութեան մինիստրը, վերջացրից իր ըէվիզիան անդրկովկասեան բոլոր քաղաքների դատաստանատներում և ուղևորվեց արդէն հոկտեմբերի 2-ին դէպի Պետերբուրգ։

—

Սեպտեմբերի վերջերում արդէն բաւական հով էր անում ԹԻՖԼԻՍՈՒՄ, իսկ հոկտեմբերի առաջին օրերից սկվեցաւ նորից անսովոր չոր, դրեթէ ամառնային եղանակը։

—

Կ. Պոլսի հայազգի մի բժիշկ, դոկտոր Ս. Յ. Յակոբեան ուղարկեց մեզ իր գրուածքը «Հիւանդին բարեկամը» վերնագրով, որ հրատարակված է Կ. Պոլսում 1885 թ-ին։ Գիրքը բաղկացած է 406 երեսից և բաժանվում է երեք մասերի։ Առաջին մասը պարունակում է օգտակար տեղեկութիւններ այն ամեն ընտանեկան խնամքների վրա, որոնք կազմում են հիւանդի առողջապահութիւնը։ Երկրորդ մասը ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է գործադրել բժշկի պատուիրած դարմանները և գործածել նրա տնօրինած դեղերը։ Վերջապէս դրքի երրորդ մասի մէջ ցոյց են տուած ամիսով, բայց ճշգրիտ հրահանգներ այն զանազան զգուշութիւնների, խնամքների, դարմանների և դեղերի վրա, որ հարկաւոր է անմիջապէս գործ դնել բժշկի հասնելուց առաջ և որոնք եթէ ճիշդ և փութով կատարվեն, աւելի օգտակար կը լինեն, երբեմն, քան թէ բժշկի դարմանները ու դեղերը, որոնք աւելի ուշ կարող են հասնել։ Այդ է, ահա, բժշկապետ Յակոբեանի գրուածքի նպատակը, որ և արտայայտված է դրքի առաջաբանում։ Գրուածքը հասկանալի և դիւրըմբռնելի ոճ ունի և կարող ենք վկայել որ գիրքը հետաքրքրութեամբ է կարդացվում։ Լեզուի մասին մենք չենք խօսում, քանի որ պօլսական լեզուն արդէն ամենքին յայտնի է։ Գիրքը տպված է Արամեան տպարանում։ Թիֆլիսում նա չէ՞ վաճառվում, բայց կարծում ենք որ լաւ կանեն այդ օգտաւէտ գիրքը ստանալ ցանկացողները, եթէ դիմեն Թիֆլիսի Կենտրոնական դրավաճառանոցին։*

—

ԳԱՆՁԱԿԻՑ *մեզ գրում են։ «Այն բազմաթիւ տրտունջները ու բողոքները, որ լսում ենք քեռատոսթեան մասին ամեն տեղ վաճառականների բերանից, այստեղ Գանձակում, ամենևին տեղիք չունեն։ Մեր վաճառականների ասելով՝ «այս տարի վաճառականների տարին է։» Գանձակում ամենից աջող է այս տարի մրգավաճառների բազարը։ Խաղողը այս տարի թէև լաւ է, բայց առատ չէ։ Գինին լաւ է և առողջ է։ Յաճախ տեղացող անձրևների պատճառով եղանակը արդէն կատարելապէս հովացել է այստեղ։»*

—

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ, *որ սեպտեմբերի 29-ին, գիշերը այդտեղի մի մանկահասակ կին, տանը միայնակ նստած և կար կարելով՝ նաւթի լամպայի հետ անզգոյշ կերպով վարվելու պատճառով ինքն այրվել է և հետևեալ առաւօտն արդէն, անսկարագրելի տանջանքների մէջ, վախճանվել է։*

—

ԻԳԴԻՐԻՑ *մեզ գրում են հետևեալը։ «Սեպտեմբերի 15-ին Իգդիրը այցելեց Երևանի թեմի փոխանորդ սրբազան Սուքիաս Պարդեանց։ Սրբազանը կարգի բերել տուեց Իգդիրի հայոց հոգևորերկսեռ դպրոցների խառն հաշիւները, և տեղիս ս. Սահակ եկեղեցու վերանորոգութեան համար նշանակեց ութ խնամակալներ։ Սրբազանի ազդու առնարանութիւնից յետոյ հանգանակութիւն բացվեցաւ նոյն ս. Սահակ եկեղեցու վերանորոգութեան համար։ Հաւաքվեցաւ աւելի քան 3,000 ռուբլի։»*

—

Մի գործակատար հաղորդում է մեզ ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը իր դասակիցների վիճակի մասին։ «Տըխուր է գործակատարի դրութիւնը Երևանում։ Առաւօտից մինչև երեկոյ իր ադա վաճառականի խանութում փակված մնալով, գործակատարը նոյն իսկ կիրակի օրեր ազատութիւն չունի, որպէս զի հանդուռանայ, զբօսնի, կարդայ դրքեր կամ գոնէ լրագիրներ։ Երբ որ շատ անգամ մուշտարուն սպասելով խանութում անգործ նստած՝ գործակատարը վերցնում է լրագրի մի թերթ կարդալու, աղան անմիջապէս յանդիմանութիւն է անում իր գործակատարին, ասելով՝ «քեզ ինչ կը սազի գազէտ ստանալ։» Աղայի կարծիքով գործակատարը իրաւունք չունի անել այն, ինչ որ աղային է վայել։ Խանութների գործակատարները Երևանում, անչափ ռոճիկ ստանալով, կատարելապէս սարուկ են իրանց աղաների մօտ. գործակատար դառնալով՝ մարդը այլ ևս իր սեփական կամքը չունի։ Նրա կամքը աղայի կամքն է։ Գործակատարը միջոց և իրաւունք չունի մտաւորապէս զարգանալ, կարդալ, միջոց չունի իր դասակիցների հետ մի որ և է տեղ տեսնվել, գործակատարները մեզանում հաւաքվելու տեղ էլ չունեն, որտեղ կարողանային ուրախութեամբ ժամանակ անցկացնել, խօսել, կարդալ և այլն։»*

—

Մեզ խնդրում են ուշադրութիւն դարձնել հետեւեալի վրա։ Հալաբարի կամուրջի մօտ, Մէտէխի դիմաց, այնտեղ, ուր ամենամեծ երթևեկութիւն է միշտ լինում, և մեծ առևտուր, որտեղ ծախվում են ամեն տեսակ մթերքներ՝ մրգեղէնը, հացը, միսը և այլն,—այն աստիճան մեծ թող է լինում, որ շատ անդամ անցնողը քիչ է մնում խեղդվում է թողից։ Եւ այդ փոշիացած ապականութիւնների հետ խառն թողը նստում է ծախվող ուտելեղէնների վրա, որ յետոյ առնում են մարդիկ և ուտում են։ Փողոցները այդտեղ ոչ ասելվում են, ոչ էլ ջրվում։ Հիմա, երբ քաղաքային ջրանցքը պատրաստ է, միթէ չէր կարելի քաղաքի այդ և սրա նման բազմամարդ փողոցները ասելել և ջրել։

—

ԳԱՆՁԱԿԻՑ *մեզ գրում են հետևեալը։ «Օրերումս հասել են այստեղ Գալֆայեան և Աբրահամեան դերասանները, ս. Փառանձեմ և օր. Սաթենիկ (Անահիտ) դերասանուհիների հետ միասին։ Խումբը մտադիր է հոկտեմբերի 4-ին մի ներկայացում տալ հայոց ուսումնարանի ուսուցիչների մասնակցութեամբ։ Կը խաղան Սունդուկեանցի «Խաթաբալա» կատակերգութիւնը և «Տէրը ծառայ և ծառան տէր» վոդեվիլը։ Ներկայացման արդիւնքի մի մասը յատկացրած կը լինի ուսումնարաններին։ Ցանկալի է որ պ. Գալֆայեան իր խմբով այցելէր և մեր ուրիշ գաւառական քաղաքները՝ Շուշի և Նուխի։»*

—

Բարձրագոյն հրամայված է իբրև կանոն ընդունել, որ այն ոչ-աղնուական անձանց պէտք է առաջարկել սբ. Վլադիմիրի չորրորդ աստիճանի չքանշան տալ, որոնք ծառայել են ոչ պակաս քան քսան տարի, և որոնք արդէն ունեն ս. Աննայի երկրորդ աստիճանի չքանշանը։

—

Պրոֆէսոր Յ. Այվազովսկի երիտասարդ ժամանակ, ինչպէս պատմում են, դէմքով շատ նման էր ռուս յայտնի բանաստեղծ Պուշկինին։ «Нов. Время» լրագրի սեպտեմբերի 26-ի համարում տպված է Այվազովսկու 1858 թուականին քաշած պատկերը և ճշմարիտ առաջին անդամից այդ պատկերը կարելի է ընդունել Պուշկինի պատկերի տեղ։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան պ.պ. անդամները հրաւիրվում են ներկայ գտնվել ընկերութեան հերթական ընդհանուր ժողովին, որ լինելու է այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 6-ին, երեկոյեան 7½ ժամին։ Պարապմունքների առարկաներն են. 1) Ընթացիկ գործեր և 2) Դոկտոր Գ. Վ. Սորոկինի զեկուցումը «Perenosphora Viticola» հիւանդութեան երևալը Կովկասեան խաղողի այգիների մէջ։ Ժողովին ներկայ գտնվելը թոյլ է տրվում և կողմնակի անձանց։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ *մեզ գրում են։ «Սեպտեմբերի վերջերում շարունակ անձրևներ տեղացին այստեղ և ահա, այսօր, հոկտեմբերի 1-ին, հազիւ դադարեց անձրևը։ Այսօր օրը պարզ է։ Սեպտեմբերի 25-ին ձիւն եկաւ, բայց իսկոյն հալվեց։ Սակայն չրջակայ մի քանի սարերի վրա դեռ ևս մնում է ձիւնը։ Դեռ ևս ցորտ չէ անում։ Աբասթումանից համարեա բոլորն էլ վերադարձան, միայն մի քանի հիւանդներ որոշել են ձմեռել Աբասթումանում։ Ոմանք այդ հիւանդներից մտադիր են ուղևորվել Եալտա կամ եւրոպական ծովեզերեայ ուրիշ քաղաքները։*

—

ԱԽԱԼՑԽԱՑՈՒՄ, *ինչպէս մեզ գրում են, պատահել է սեպտեմբերի 20-ին հետևեալ ողբերգական անցքը. մի աստիճանաւոր բէվիզիէրից սպանում է բժիշկ Լ—ի կնոջ (որը հայ էր) և այնուհետև ինքն էլ անմիջապէս անձնասպանութիւն է գործում։ Մեռած կինը թողնում է իրանից յետոյ երկու մանր զաւակներին։*

միշտ գործունէութեան մէջ գտնվեն. լոկ ֆիզիկական գործողութիւնը կարող է տալ մկանունքներին ընդունակութիւն՝ կանոնաւոր ոյժով կծկվել և պարզվել, և հէնց այդ գործողութեան ժամանակ՝ նրանք ընդունում են իրանց մէջ մեծ քանակութեամբ մաքուր, թթուածինի հետ միացած արիւն, որ մնուցանում և կաղդուրում է մաշված, թուլացած մկանունքները։ Որքան շատ պարապի մարդ ֆիզիկական աշխատութեամբ, այնքան էլ յաճախ և արագ կը կատարվի նրա մկանունքների մաշվելու և վերանորոգվելու գործողութիւնը, այնքան էլ ուժեղ և զարգացած կը լինեն նրա մկանունքները։ Եւ ընդհակառակ՝ երկարատև, անընդհատ մտաւոր զբաղմունքը կլանում է մարդու մկանունքային բոլոր գործողութիւնները, թուլացնում, խլում է նրա մարմնի ոյժը և այդպիսով դարձնում է նրան հիւանդոտ, նուազ և ֆիզիկապէս անզօր, թոյլ ապրած։ Այս տեսակ ֆիզիկական թուլութեան հետևանքը լինում է մարմնի առողջութեան ընդհանուր անկումը, որ մանաւանդ խիստ կերպով ներգործում է ուսումնարան գնացող փոքր երեխաների վրա։ «Երեխաները փոքր հասակից՝ օրվայ մեծ մասը ուսումնարանում կատարեալ անգործութեան մէջ են անցկացնում։ Նրանց մկանունքները չափից դուրս շատ են հանգստանում, քնում են։ Անգործ յոգնածութիւնից առաջ է գալիս ողնաշարի ծռումն, երևում է սապատ։ Ոսկորները սկսում են ծռվել։ Թոքերը վատ են շնչում։ Ֆիզիկական աշխատանքի պակասութիւնը առաջ է բերում նիւթերի դանդաղ փոխարկութիւն (обмѣнъ веществъ) մարմնի մէջ։ Արիւնը օդից քիչ է կլանում թթուածին։ Եւ սրա հետևանքը լինում է աչակերտների արեան սակաւութիւնը։ Ամեն տեսակ ֆիզիկական լարումն առաջ է բերում նրանց մէջ շնչառաւութիւն, սրտի բարախումն, գլխի պտոյտ։ Երեսի կարմրութիւնը կորչում է։ Մկանունքները բարակում են. նրանց ոյժը չափազանց պակասում է։ Ախորժակը կորչում, մարսողութիւնը վատանում է, և երեխաները ըսկսում են լղարել։» Այս բոլորից յետոյ՝ շատ հեշտ է մարդու համար ամեն տեսակ հիւանդութեան ենթարկվելը։ Նրա մարմինը ներկայացնում է հարուստ մշակած հող, որի վրա կարող են բուսնել ամեն տեսակ ախտեր, ամեն տեսակ ցաւեր, վարակիչ հիւանդութիւններ, որոնցով լի են այժմեան բազմամարդ քաղաքները։ Եւ զարմանալի բան։ Կարծես թէ քաղաքակրթութեան, պրոգրէսի նպատակը հէնց այդ է, որ մարդիկ, փոխանակ ֆիզիկապէս, մտաւորապէս և բարոյապէս կատարելագործվելու, ընկնեն այս տեսակ մոլորեցնող ծայրայեղութեանց մէջ և, փոխանակ բաղդաւորութեան՝ հիւանդութիւն և տանջանքներ աւելացնեն կեանքի մէջ։ Ո՛րքան ճշմարիտ է ասում Բօկլը. «Քաղաքակրթութեան հաստատութիւնը և ապահովութիւնը կախված է նրա տարբերի կանոնաւոր միաւորութիւնից, այն ներդաշնակութիւնից, որով այդ տարբերը գործում են միասին։ Եթէ նրանցից մէկը աւելի գործունէութեան մէջ լինի քան թէ միւսները, այն ժամանակ քաղաքակրթութեանը վտանգ է սպառնում։» Սակայն մեր դարը կարող է պարծենալ նրանով, որ այժմ մարդիկ շատ շուտով են հասկանում իրանց սխալները և իսկոյն միջոցներ են որոնում ուղղել այդ սխալները։ Եւրոպայում բազմաթիւ յայտնի գիտնականներ և բժիշկներ այժմ խիստ ուշադրութիւն են դարձնում՝ թէ ուսումնարանական և թէ հասարակական առողջապահութեան վրա։ Կազմվում են ընկերութիւններ, միջազգային առողջապահական ժողովներ, և չեն խնայում՝ ոչ փող, ոչ դիտութիւն և ոչ աշխատանք, հասարակութեան ընդհանուր առողջապահական դրութիւնը բարձրացնելու համար։ Ռուսաստանում նոյնպիսի մեծ եռանդով սկսել են առողջապահութիւն քարոզել։ Ֆիզիկական աշխատանքի կարևորութիւնը և օգուտը ակնյայտնի կացուցանելու համար, ռուսաց գրականութիւնը, պարբերական մամուլը իր ուշադրութիւնը դարձրել է դէպի գիւղ, և գիւղական կեանքը՝ իր ֆիզիկական աշխատութեամբ, օդի և ջրի պարզութեամբ՝ առաջարկում է, որպէս կաղդուրիչ, վերանորոգիչ միջոց՝ ռուս ինտելիդէնցիայի թուլացած և մաշված ոյժերի դէմ։ Գիւղում, ֆիզիկական աշխատութեամբ պարապելով, ռուս ինտելիդէնտը կրինակի օգուտ կարող է բերել. նախ որ ինքը կը սովորի գիւղացու մօտ դրական աշխատանք և դրանով կը վերականգնէ իր մարմնի թուլութիւնը, և երկրորդ, որ դանվելով գիւղացու հետ շարունակ անմիջական յարաբերութեան մէջ, ինտելիդէնտը, իր գիտութեան և զարգացման շնորհիւ, կարող է՝ գործնականապէս, շատ բարոյական և մտաւոր օգուտներ տալ գիւղացուն։

Գիւղի աշխատանքը, պարզ՝ թթուածինով առատ օդը, խստակ և ամեն տեսակ վարակիչ մանրակազմներից (միկրոբ) ազատ ջուրը, այնպիսի առողջապահական միջոցներ են, որ յատուկ են միայն գիւղին և կազմում են գիւղացու առողջութեան և երջանկութեան գլխաւոր անկիւնաքարը։ Եթէ այս պայմանների վրա աւելացնենք և մտաւոր զարգացումը, որ ինտելիդէնցիան իր հետ կը տանի գիւղ, գիտութեան և կեանքի փորձը, որ միակ նրա սեփականութիւնն է,—այն ժամանակ մենք կը ստանանք այն բոլոր նըպաստիչ հանգամանքները, որոնց շնորհով կարելի է ստեղծել կեանքի առաջադիմութեան և բաղդաւորութեան գլխաւոր պայմանները։ Եւ իրաւ, որքան գրաւիչ, և մի և նոյն ժամանակ բէալական, հասկանալի բան է մարդու այն դրութիւնը, երբ նա, գիտութեան ամենանոր պաշարով ապահովված, լինելով մտաւոր զարգացման բարձր աստիճանի վրա,—իր ձեռքով մշակում է իր հողը, հացնում է և քաղում է նրա պտուղները, որոնց արդիւնքը ապահովում է նրան՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս, և մի և նոյն ժամանակ, մասնակցում է ընդհանուր, հասարակական գործերի մէջ, զրում է իր քաղաքացիութեան իրաւունքը, զգում է, որ ինքը և պատուաւոր քաղաքացի է և հասարակ բանուոր, և գիտնական՝ զարգացած ինտելիդէնտ և աշխատաւոր ազնիւ գիւղացի։ Թէ որքան այս գաղափարը գրաւել է ռուս ինտելիդէնցիայի յայտնի մի կուսակցութեան ուշադրութիւնը, այդ երևում է նրանից, որ այժմ շատ երիտասարդներ, ուղղակի համալսարանից դուրս գալուն պէս գնում են գիւղ և սկսում են երկրագործական աշխատանքով պարապել։ Կոմս Լ. Ն. Տօլստոյ *իր ծերութեան հասակում, հասարակ բանուորի շապիկով՝ ֆիզիկական աշխատութեամբ է պարապում։ Յայտնի պրոֆէսոր-քիմիկոս Լէնդելդարդտ, «Изъ деревни» անունով դրքի հեղինակը, սրանից 16—17 տարի առաջ, մշտապէս թողեց Պետերբուրգը և բնակվեցաւ գիւղում։ Ով որ կարդում է նրա նամակները, կարող է հասկանալ՝ թէ ինչ է անում այդ մարդը գիւղում, ժողովրդի մէջ։ Օրինակով, խօսքով և գործով նա ապացուցանում է, որ ինտելիդէնտը հարկաւոր է գիւղին՝ ոչ միայն գիւղացուն կարդալ-գրել սովորեցնելու նպատակով, այլ և նրա համար, որ իր կեանքի օրինակով ցոյց տայ գիւղացուն՝ թէ ինչպէս հարկաւոր է ապրել գիտութեան և բարոյական օրէնքների հիման վրա, և ինքն էլ, մի և նոյն ժամանակ, շատ բաներ սովորի գիւղացու մօտ։ Ինտելիդէնտը կը սովորեցնէ գիւղացուն գիտական հետազօտութիւններ անել, կաղատէ նրան կաշառակեր հարստահարիչների ձեռքից, իսկ ինքը կը սովորի գիւղացուց համբերութեամբ և ճակատի քրտինքով աշխատել։ Եւ ահա Լէնդելդարդտ սովորում է գիւղացուց՝ թէ ինչպէս է հարկաւոր վարվել կերակրող և մնուցանող երկրի հետ, ինչպէս է հարկաւոր աշխատել։*

Նրա գործնական օրինակին հետևողների թիւը հետզհետէ շատանում է, և ռուսաց գրականութիւնը այդ շարժման՝ այդ քաղաքից դէպի գիւղ սկսված հոսանքի մէջ գտնում է թէ գիւղացու և թէ ինտելիդէնցիայի ապագայ վերածնութիւնը։ Իր յօդուածի վերջը, բժ. Պեսկովսկի դառնում է ռուս երիտասարդութեանը հետևեալ խօսքերով. «Ուրեմն թեթև սրտով դիմեցէք դէպի գիւղ, մի վախենաք առողջութիւնից, ազատ օդից, Աստուծու լոյսից և բնութեան ամեն դեղեցկութիւններից։ Ձեր կողմն է պատմութիւնը և ուսումը։ Առողջութիւնը կեանքի լաւագոյն փառքն է, երկրիս բաղդաւորութեան ամենամեծ դրաւականը։»

Ե. Դ.

Մեզ գրում են, որ Ախալքալաքից Ախալցխա տանող ճանապարհում Կուր գետի վրա շինված կամուրջը քանդվել է և հաղորդակցությունը կտրվել է։ Դիտաւորություն կայ վերանորոգել այդ կամուրջը։

—

Մայրաքաղաքի լրագիրներում Այվազովսկի մի փոքրիկ նամակ է տպագրել, որով իր ջերմ շնորհակալություն է յայտնում այն բոլոր անձանց, որոնք շնորհաւորական նամակներ և հեռագիրներ էին ուղարկել իրան սեպտեմբերի 26-ին իր յիսնամեայ յոբելեանի առիթով։ Երևելի նկարիչը աւելացնում է, որ ստիպված է տպագրութեամբ շնորհակալություն յայտնել իրան բազմաթիւ շնորհաւորողներին, հնար չունենալով մասնաւոր նամակներով իւրաքանչիւրին ջոկ ջոկ շնորհակալություններ յայտնել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Լայպցիգ, սեպտեմբերի 18-ին

Լինելով կովկասեցի և առաւելապէս դարբաղցի, մենք բազմաթիւ պատմություններ էինք լսած աւազակների խմբերի մասին, որոնք մինչև օրս չեն դադարում զարհուրանքներ պատճառել Կովկասի ամբողջ դաւառներում և մինչև իսկ նահանգներում։ Սակայն մենք մինչև օրս պատիւ չէինք ունեցել աչքով տեսնել այնպիսի աւազակներին, ինչպիսիներն են Քեօռ-օղլին, Աբդալ-Քեարիմը, Ալապկաբը, Ալի-Խըզըր-օղլին և վերջապէս վերջին հերոս Քեարիմը։ Այսօր մենք արժանացանք այդ պատուին և ինչ ես կարծում, սիրելի ընթերցող, ո՞ր տեղ։—Լայպցիգում։ Թուում է մեզ, որ կասկած ես տանում մեր ասածի ճշգրտության վրա։ Հշմարիտն ասած մենք էլ հաւատ չէինք ընծայում տեղիս լրագիրների յայտարարություններին, որոնք հրաւիրում էին քաղաքիս բնակիչների ուշադրությունը այս աւազակների խմբի (որի հետ ուզում եք ծանօթացնել քեզ) դատաստանական քննության վրա։ Արդարև, ո՞վ կարող էր երևակայել, որ լուսաւորեալ Լայպցիգ քաղաքի մէջ կարող է աւազակների խումբ կազմուել, այնպիսի խումբ, որն ունի աւելի քան 30 անդամ և որը մեղադրված է 119 չարագործություններում։ Իրաւ, սկզբից լրագիրների լուրը մենք քամի անուանեցինք, սակայն երբէ, երբ սեպհական աչքերով տեսանք այս խումբը, այլ ևս կասկածելու հիմք չը մնաց մեր մէջ։

Երէկ տեղիս դատաստանական ահագին դահլիճը լիքն էր հանդիսականներով, որոնց մեծադոյն մասը իրաւաբաններ և մանկավարժներ էին։ Ժամը տասն էր, այլ ևս եթէ ասել էիք դրել՝ գետնին չէր հասնիլ։ Գրեթէ բոլոր ներկայ դանվողների երեսին մէկ ուրախ ժպիտ էր երևում. կարծես հարսանիք էին եկել։ Ահա ներս մտան դատաւորները. սակայն զարմանալի բան, սրանց երեսներն էլ նոյն ժպիտն էին արտայայտում։ Բայց ահա բացվեց դահլիճի դուռը և կից սենեակից ներս մտաւ մի աստիճանաւոր (սա արդէն այնպէս էր ծիծաղում՝ որ գարեջրից փքված փորը թռչկոտում էր) և սրա ետևից.... աւազակների խումբը։ Գրեթէ ընդհանուր ծիծաղը օրոտաց դահլիճում։ Բոլոր հանդիսականները ոտի կանգնեցին և մինչև իսկ չատերը, ընդդէմ դերմանացու խոհեմության, բարձրացան նստարանների վրա. աւազակներից չատերն այնքան մեծ էին, որ հաղիւ էին երևում նստարանների ետևից։ Ոստիկանությունն այս, նստարանների ետևից չերևացող աւազակներից, կալանաւորել էր երեսուն հատիկ, որոնցից միայն եօթն էին արժանացել դատաստանական քննության. միւսները այնքան փոքրիկ են եղել, որ Սակսոնիայի օրէնքը այժ չէ ունեցել նրանց դատաստանական կարգով պատժել և բաւականացել է խնդրել ծնողներին, որ նրանց «փափլիկ տեղերը քիչ տաքցնեն»։ Սակայն այս եօթն էլ բաւական համակրելի դէմքեր, աւազակների դէմքեր ունէին և այնպիսի արժանաւորությամբ էին իրանց պահում դատաւորների և բաղմության առջև, որ զուցէ մեր Կովկասի ամենայայտնի աւազակները սրանց տեսնելով, ամաչէին իրանց թուլությունից։ Սրանցից միայն երկքն էին 14 տարեկան հասակն անցել. ամենից մեծը 16 տարեկան էր։ Մնացածներից երկքը 12 տարեկանից քիչ էին աւել և Վոլֆը, որին մի քանի չարագործությունների համար պատժել չը կարողացան, աչքի առաջ ունենալով նրա տարիքը, դեռ ևս նոր էր մտել 12 տարին։

Աւազակների կենտրոնն էր Այլէնբուրգ երկաթուղու կայարանը, որտեղ սրանք գալիս էին ամեն օր ճանապարհորդների կապոցները քաղաք տանելու. սակայն ինչպէս երևաց, այս կապոցներից չատերը նշանակած տեղին չէին հասել։ Այս կայարանում, գրեթէ ամեն օր, մինչև կէսօր, կենտրոնական ժողովներ էին տեղի ունեցել, որին մասնակցում էին գրեթէ բոլոր անդամները։ Ունեցել են և ուրիշ կենտրոններ, քաղաքիս դանդաղն մասերում. միայն միշտ այնպիսի տեղեր են ընտրել, որտեղ մեծ բազմություն է լինում, օրինակ՝ հրապարակներ, պաստաժներ և այլ այսպիսի տեղեր։ Եղել են ժողովներ և կէսօրից յետոյ. դա այն ժամանակ, երբ խումբը մի որ և է անհրաժեշտ ու ստիպողական կարգադրության պէտք է ունեցել։ Այս ժողովները պիտի մասնաւոր ժողովներ անուանենք, որովհետև սրանց մասնակցում էին միայն այս ինչ, կամ այն ինչ կենտրոնում ներկայ դտնվող անդամները։ Կենտրոնական ժողովը վճռում էր դանդաղ գործեր, բայց զըլխաւորապէս նշանակում էր թէ ովքեր ո՞ր կենտրոնը պիտի գնան։ Ամեն օր տեղերը փոփոխում էին այսպէս. մէկ օր մի խումբ գնում է այս ինչ հրապարակը. միւս օրը նոյն այդ հրապարակը գնում էր մէկ ուրիշ խումբ, երրորդ օրը երրորդ խումբը և այլն և այլն։ Խմբի անունն էր. «Zandern»։ Խումբն ունեցել է իր յատուկ լեզուն, անունները, օրինակ Luxus, Mutz, Kacksch (Լուկսուս, Մուց, Կակշ և այլն և այլն) և չվոցը, որով իրար ղդուշացնում էին ոստիկանությեան, կամ մի որ և է այլ վտանգի ոչ հեռու գտնվելը։

Անդամները բաժանվում էին «բերող» (մեր լեզուով զող) անդամներ և ղդուշացնող անդամներ, այսինքն պահանորդեր (Wache)։ Նախագահն էր ամենից մեծը, որը ոչ մի «բերութիւնում» (գողութիւնում) գրեթէ չէ խառնվել. նա միայն հրամանատար է եղել և եթէ պատահել է նրան «բերել», դա իր սեպհականությունն էր, ուրիշներին մաս չէր հասնում դրանից։

«Բերած» իրեղէնները բաժանում էին այսպէս. կէսը գործադրում էին ընդհանուր խմբի պէտքերի և ղդուշացնողների ռոճկի վրա. միւս կէսը բաժանում էին հաւասարապէս, միայն նախագահը երեք մաս էր ստանում, իսկ Վոլֆը, ամենաբարկի անդամը, երկու մաս։

Մի խօսքով հիանալի ծրագիր. աներևակայելի կազմակերպություն, միաբանություն ու միաձայնություն։ Իրաւ է, նախագահը ծրագրից դուրս անկրաւություններ է արել, օրինակ չատ անգամ «բերածը» բաժանելու տեղ, բոլորն ինքն է վերցրել, սակայն ո՞ր ընկերությունում այս չէ պատահած, կամ չէ՞ պատահում։

Խմբի Քեարիմի անունն էր Միաէր (Mieter)։ Իր ստորադրեալները չատ էին դանդաղում սրա բարբարոսությունից։ Ամենից մեծ և ամենից ուժեղ լինելով և մոռանալով իր եւրօպացի լինելը, սա ժամանակ առ ժամանակ գործադրում էր այժը իր ընկերների գլխների, կողքերի և այլ պատահած տեղերի վրա։ Օրինակ, սա խիստ կը սիրէր ծխել ու ուտել, առաւելապէս Դրեզդենի երշիկներ, և որովհետև ինքն, ինչպէս նախագահի պատիւն է պահանջում, աւազակությամբ, բառի լուն նշանակությամբ, չէր պարապվում, ուստի մէկին ուղարկում է այս ինչ կամ այն ինչ խանութը երշիկ կամ սիգար բերելու։ Ալլահը ոչ անէր, եթէ գնացողը դատարկ ձեռներով էր վերադառնում, ասիական բռունցքներից այլ ևս նա ազատվել չէր կարող։

Խմբի ամենաճարպիկ անդամն էր Վոլֆը (Wolf դայլ է նշանակում և իրաւ սա շատ խելօք դէմք և գայլի աչքեր ունէր)։ Խմբի ամենաաւագ ստախօսն էր սա և ամենից հմուտ անդամը։ Քննության ժամանակ խօսում էր շատ, լաւ և տեղեակ։

«Բերում» են եղել ծխախոտ, ըստ մեծի մասին սիգար, երշիկներ, քաղցրեղէններ, ճանապարհորդների պայուսակներ—դանդաղ իրեղէններով, ակնոցներ, պօրտմոնէ, պատկերներ, սապոն, թաշկինակներ, առանց խտրության բամբակէ կամ մետաքսէ լինելը, մանկական խաղալիքներ և մի խօսքով ամեն մի բան, ուր հասել էին իրանց թաթիկները։ Ի հարկէ, այս բերածներից շատերը ծախծխել են։

Երբ «բերելը» անհնարին է եղել, մեր աւազակները թողնելով իրանց քաջ պարապմունքը, զիմել են խաչագողությեան, որը, մեր կարծիքով, պատիւ չէ տալիս իրանց «աւազակների» խումբ»—«Die schwarze Bande» անուն կրող ընկերությեան։ Սակայն այս խաչագողները եթէ օրինակ չը լինեն մեր խաչագողներին, միով բանիւ ոչնչով պակաս էլ չեն. և եթէ աչքի առաջ վերցնենք սրանց խաչագողիկներ լինելը, այն ժամանակ սրանց մենք հաղար ու մէկ աստիճան բարձր պիտի դնենք մեր խաչագողներից։ Ահա թէ ինչպիսի ուղղություն է ունեցել սրանց խաչագողությունը. վերցնում են մի թերթ թուղթ և գրում. «այս ինչ կինը կորցրել է իր ամուսնուն և ինքն էլ սաստիկ հիւանդ ու քաղցած է, ոչինչ չունի ուտելու, ուստի տուել է այս թերթը իր միակ որդուն, որ դունէ-դուռ ման դայ և ողորմություն հաւաքէ իր թշուառ մոր համար, որը դուցէ մի քանի օրից յետոյ սև հողին արժանանայ»։ Մէկ ուրիշ անդամ գրում են. «ստորագրված մի որ և է տիկին Schleh-ի ամուսինը, կամ վայր ընկաւ այս ինչ չինության ժամանակ չորրորդ յարկից ու մեռաւ, կամ հէնց չինության փլատակների տակ մնաց ու թողեց վեց մանուկ-զաւակներ, որոնք քաղցած-ծարաւ մնում են հիւանդ մոր ծոցում» և այլն և այլն։ Այսպիսի թերթերով սրանք կարողացել են ամեն անդամ 50 ֆէննինգից մինչև 2 մարկ ստանալ։ Աստուած ոչ անէր, եթէ մերժում էին սրանց խնդիրը. մերժողներին անպատճառ մի որ և մնաս էր պատահում, ինչպէս Մարիէն անունով փողոցի վրա դտնվող մի տան դպի խողովակը դանակով կտրել էին և դաղը կրակ էին տուել։

Ահա, սիրելի ընթերցող, Լայպցիգի քեարիմների և խաչագողների համառօտ նկարագրությունը. յօդուածը շատ կերկարանար, թէ չէ աւելի մանրամասնաբար կը ծանօթացնէինք ձեզ այս թըշուառ, այս ողորմելի և մի և նոյն ժամանակ զղուանք, մի ծածուկ զղուանք պատճառող մանուկների հետ։ Մի բան շատ տարօրինակ էր, դա դատաստանական քննության անցքը։ Զը նայած, որ գրեթէ բոլոր լրագիրները ուշադրություն էին հրաւիրում այս քննության վրա, սակայն առանձին ոչինչ չը կար։ Դատաւորները լոկ չոր ու ցամաք դատաստանական աչքով նայեցին այս թըշուառների չարագործությունների վրա։ Մեզ թուում է, որ աւելի համակրելի և աւելի ճիշդ կը լինէր, եթէ այս գործին հոգեբանական տեսակէտից նայէին. այդ չեղաւ և դատաւորները երեք ժամ խօսացնելուց յետոյ վճռեցին. առաջինին (Վոլֆին) 24 ամիս բանտարկություն, երկրորդին 21 ամիս, երրորդին և չորրորդին 18 ամիս, հինգերորդին 12, վեցերորդին 6 և վերջինին 3 ամիս։ Տեղիս համալսարանի իրաւաբան ուսանողները (որոնց համար առանձին տեղ էր պատրաստված դահլիճում) ծափահարությամբ ընդունեցին այդ վճիռը։ Սակայն թէ ինչը ոգևորեցրեց այդ պարոններին, դա մենք չիմացանք. միակ բանը, որ կարող էր ոգևորեցնել այդ պարոններին, դա իրանց տգիտությունը պիտի լինի։ Եւ իրաւ, նայելով այն պատառոտած, կեղտոտ, յանդուգն մանուկների վրա, մարդուս սրտից արիւն էր կաթում։ Տասն և մէկ տարեկան Վոլֆին երկու տարի բանտարկություն են վճռում և նրա երեսի արտայայտությունը չէ փոխվում։ Սոսկալի երևոյթ։

Սրանց անհամեմատ, իրանց հասակում աներևակայելի զարդացումը, զարդացումը դէպի զանազան կեղտոտություններ և անիրաւություններ, ապշեցնում էր մարդուս, սիրտ էր ճնշում։ Ահագին բաղմության առջև սրանք այնպէս էին պահում իրանց, որ նկարագրել անկարելի է։ Բոլոր մանուկները բանտորների որդիք էին։

Այո, սոսկալի, դառը երևոյթ է այս։ Եւ այս բոլորի արմատը դտնվում է չքաւորության մէջ։ Մեզ շատ անգամ է պատահել փողոցներում, հրապարակների վրա պատառոտած, ցեխոտ, կեղտոտ երեխաներ տեսնել, որոնք ամբողջ ժամերի ընթացքում չէին հեռանում յիշեալ տեղերից։ Քանիցս հարցրել ենք նոյն իսկ այդ մանուկներից, թէ ինչու տուն չեն գնում և միշտ պատասխան ենք ստացած թէ «տանը ոչ ոք չը կայ. դուռը փակած է»։ Այսինքն, առաւօտը շատ հայրեր ու մայրեր դուռը փակելով երեխաներին ճանապարհ են դցում ուսումնարան, իսկ իրանք ուղևորվում են գործարանատուն։ Վերադառնում են երեկոյեան ժամը ութին, դուռը բացում են և միայն այդ ժամանակ է երեխան իր ծնողների հետ. ամբողջ օրով նա զրկված է ծնողի հսկողությունից, մոր սիրուց։ Սակայն և այդ չնչին ժամերի ընթացքում, երբ նա ծնողների հետ է, նա միայն հառաչանքներ է լսում նրանց սրտերից և տրտմություն է տեսնում նրանց երեսների վրա։ Ողորմելի ծնողներն օրվայ 12 ժամ պատժից (այո, սա աչխատանք չէ, սա պատիժ է) յետոյ, վերադառնում են տուն, ոչ միայն առանց ֆիզիկական, այլ և առանց մտաւորական և մինչև իսկ բարոյական ոյժի։ 12 ժամ պատժից յետոյ, խեղճ մայրերն ոյժ չեն ունենում սիրել, դգուել իրանց երեխաներին. և այսպիսով մանուկը զրկված է ոչ միայն ծնողի հսկողությունից, այլ և մոր սիրուց։ Օ՛, դառը ճակատագիր, անտանելի վիճակ ունի եւրօպացի այժմեան պրոլէտարիատը։

Ողորմելի ծնողները արցունքով ընդունեցին դատաստանական վճիռը, սակայն արցունքը ոչինչ տպաւորություն չը գործեց դատաւորների սառը սրտերի վրա։

Տասն և մէկ տարեկան Վոլֆին երկու տարի բանտարկություն։ Ի՞նչ է ուզում անել օրէնքը այս ողորմելիների հետ, դա մենք չենք հասկանում։ Այն կազմակերպությունը, որն ունի Եւրօպայի այժմեան բանտը, Վոլֆին, քաղցրեղէն գողացող Վոլֆին, միայն մարդասպան կարող է չինել. և մենք համոզված ենք, որ այս անմեղ դանուկները, իրանց պատիժը տանելուց յետոյ, աւելի վատ չարագործությունների մէջ կընկնեն։ Այս անհերքելի է և սրա օրինակները մենք ամեն րոպէ տեսնում ենք մեր աչքի առջև։

Որքան դառն է այս երևոյթը, սակայն ասում են, որ սրանցով չէ վերջացած Լայպցիգի քեարիմների թիւը. ասում են որ դեռ ևս շատ խմբեր կան։

Վերջացնելով մեր յօդուածը, մենք հարկաւոր ենք համարում յիշել այստեղ դոկտոր Շրեբերի (այժմս հանգուցեալ) անունը, որը, աչքի առաջ ունենալով այս սոսկալի երևոյթը, հիմնել է տեղս մի մանկական ընկերություն, որը այժմ կրում է իր հիմնողի անունը և անուանվում է «Շրեբերի ընկերություն»։ Այս ընկերության հետ մենք շուտով կաշխատենք ծանօթացնել մեր հասարակությունը մամուլի միջոցով։

Գ. Կաֆեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հեռագիրը Փարիզից հաղորդեց գեներալ Կաֆարելի ծառայությունից արձակելու մասին։ Լրագրական տեղեկություններին նայած, նա կաշառքներ էր առնում խոստանալով կաշառատուներին չքանչաններ շնորհել. բացի դրանից ասում են, որ նա էր տարածել լուրեր փորձնական սպառազինության մասին և այդպիսով վաղօրոք յայտնի եղաւ թէ որ շրջանում կը լինի փորձնական սպառազինությունը։ Գեներալ Կաֆարելի կորսիկացի է և կայսր Նապոլէօն III-ի պալատականներիցն է։

—Իտալական պաշտօնական «Riforma» լրագիրը հերքում է այն լուրերը, որ իբր թէ Ֆրիդրիխսրուհում ստորագրված է Իտալիայի և Գերմանիայի մէջ կայացող դաշնակցության պայմանագրությունը։ Իտալական մամուլը առհասարակ իշխան Բիսմարկի և Կրիսպիի տեսակցությունից սպասում է միայն լաւ հետևանքներ Իտալիայի դէպի Աֆրիկան ունեցած գաղթական քաղաքականության համար։ Այժմս Իտալիան այլ ևս ակնկալություն չունի Անգլիայի միջամտության Աբիսսինիայի գործերի մէջ։

—Լոնդոնից հեռագրում են «Нов.» լրագրին, որ լուրեր են տարածված թէ իբր մարկիզ Սալիսբիւրի մտադրություն ունի Ֆրիդրիխսրուհ գնալու։

—Նոյն լրագրին սեպտեմբերի 26-ին հեռագրում են Սկուտարիից, որ Ալբանիայում բաւական անկարգություններ են պատահել։

—Վիէննայից սեպտեմբերի 25-ին հեռագրում են «Нов. Вр.» լրագրին. Հաստատ քաղաքական շրջաններին մօտ աղբիւրներից տեղեկություն կայ, որ կոմս Կալնոկիի և իշխան Բիսմարկի տեսակցության ժամանակ վերջնականապէս վճռված է Կորուրդեան պրինց Ֆերդինանդին հեռացնել Բուլգարիայից։ Եւ եթէ, հակառակ ամենքի ակնկալության, կայսր Ֆրանց Յոսէֆի ոնդարական սէյմի բացման ժամանակ կարդացած զահական ճառի մէջ չը կար ակնարկություն այդ բանի մասին, այդ նրանով է բացատրվում, թէ այդ տեսակ հա-

զորդութիւն անելու տեղը ոչ թէ կայսրութեան այս կամ այն մասի պարլամենտներն են, այլ ընդհանուր դեղեգացիաները։

—Բուխարէստից հեռագրում են թէ սեղանաւոր Գէորգ, որը գնացել էր Վիէննա փոխառութիւն անելու Բոլղարիայի համար, վերադարձել է Բուխարէստ առանց իր նպատակին հասնելու։ Նոյն հեռագրի ասելով Ստամբուլով վաճառում է իր կալուածքի մի մասը, իսկ միւս մասը իր մօր անուան վրա է հաստատում։

—«Figaro» լրագրին հաղորդում են, թէ սերբիական թագաւորը և թագուհին բոլորովին հաշտվել են և թէ Նատալիա թագուհին շուտով կը վերադառնայ Բելգրադ։ Վիէննայում ենթադրում են, որ հաշտութիւնը կայացել է վերջին ընտրութիւնների ներգործութեան տակ, քանի որ սերբիական ընտրողները ուղարկել են սկուպշինա մեծ մասամբ Ռուսաստանին կողմնակից թեկնածուներին, որոնք կողմնակից են և Նատալիա թագուհուն, և այսպիսի հանգամանքներում Միլան թագաւորին ձեռնտու չէր լինի շարունակել անհաշտ ապրել թագուհու հետ, որին շատ հաւատարիմ են սերբիական ազգային կուսակցութեան պատկանողները։

—«Kreutz Zeit.» լրագրին Բրիւսելից իբր լուր հաղորդում են, որ Բրազիլիայի կայսրը մինչև այս տարվայ վերջը կը հրաժարվի Բրազիլիայի գահից յօգուտ իր աղջկայ։

—Մադրիդից հեռագրում են «Нов.» լրագրին, որ իբր թէ մահմեդական ֆանատիկոսները քանդել են Մարոկոյում գտնվող սպանիական վանքը։ «Soir» լրագիրը հաղորդում է որ հրամայված է երկու ֆրանսիական զրահակիր նաւերին ուղևորվել դէպի Տանգեր (Մարոկոյում)։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի քանի ժամանակ առաջ Ֆրանսիայի Տուր քաղաքում մի խեղճ կօշկակար Պօալրա անունով 40 միլիօն դօլլարի (մօտ 80 միլիօն բուբլու) ժառանգութիւն ստացաւ իր մի քեռուց, որ մեռել էր Ամերիկայում, որին նա մինչև անգամ չէր ճանաչում։ Այս օրերս առաջվայ չքաւոր կօշկակարը այցելեց Փարիզում սօցիալիստների ժողովը և այդ կուսակցութեան գործին նուիրեց ժառանգութեան մի մեծ մասը, յայտնելով որ ինչպէս և առաջ, կը մնայ հաւատարիմ սօցիալական կուսակցութեանը։

* * *

Շների մի քանի ցեղերը, ինչպէս յայտնի է, կարճատես են. չը նայած որ կարճատես շները աւելի լաւ հոտառութիւն ունեն, այնու ամենայնիւ կարճատեսութիւնն ունի շատ անյարմարութիւններ։ Անգլիայում վճռել են այդ անյարմարութիւնը վերացնել և շների վրա սկսել են ակնոցներ դնել, որոնք կպցնվում են դնչկապերին։ Շան ակնոցների հնարողը կառավարութիւնից մօտ 50 հազար բուբլիով առնելով այդ ակնոցների մենավաճառութեան իրաւունքը, մի չաթթվայ մէջ կարողացաւ յետ ստանալ իր ծախսած գումարը։ Ամեն մի ակնոցը դնչկապի հետ միասին արժէ տաս բուբլի։

* * *

Այս անցեալ սեպտեմբերի 2-ին ֆրանսիական յայտնի գիտնական Շեվրելի 101 տարին լրացաւ։ Զը նայած իր այդ հասակին, նրա առողջութիւնը շատ լաւ է։ Անցեալ տարի նա մի քանի անգամ մրսեցաւ, բայց շուտով կարողացաւ ոտի կանգնել։ Նրա կեանքը շատ կանոնաւոր է. նա ուտում է օրական երկու անգամ, նախաճաշիկի և ճաշի ժամանակ։ Նրա ճաշը բաղկացած է երկու տեսակ կերակրից՝ բուլիոնից և մսեղէն մի բանից կանաչեղէնի հետ պատրաստած։ Շաքարեղէնի տեղ նա ուտում է միշտ միրգ։ Նախաճաշիկից յետոյ նա խմում է մի բաժակ սուրճ, իսկ ճաշից յետոյ մի բաժակ կաթ։ Եթէ անձրևային եղանակի պատճառով նա տանն է մնում, այն ժամանակ նա կարդում է կամ քրքրում է իր հին աշխատանքները, յիշատակարանները և այլ ձեռագիրները։ Շեվրել ասում է, որ ինքը չէ կարող չաշխատել։ Այս օրերս նրա մօտ եկած մի լրագրի թղթակցին նա ծիծաղելով ասեց. «հարիւր տարի ապրելու արհեստի ամենահրաժեշտ պայմաններից մէկը—աշխատանքն է։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի։ Լրագիրների խօսքերով գեներալ Բուլանժէ ենթարկված է 30 օրվայ խիստ կալանաւորութեան։ Այնուհետև մինիստրների խորհուրդը կը վճռի այն հարցը թէ Բուլանժէին հարկաւոր է արդեօք հրաժարեցնել զօրաբաժնի կառավարելուց։

ՍՕՖԻԱ, 2 հոկտեմբերի։ Ազգային ժողովի դումարումը նշանակված է հոկտեմբերի 15-ին։ Կառավարիչները անմիջապէս կառաջարկեն ժողովին մի օրինագիծ, որով, ինչպէս լսվում է, նշանաւոր կերպով կընդարձակվեն իշխանի բարձրագոյն իրաւունքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի։ «Гражданинъ» լրագիրը հաստատում է, որ պետական խորհրդին առաջարկված է մի ծրագիր բարձրացնել կալուածական հարկը տասն և ութ կենտրոնական և հարաւային նահանգներում, որպէս աւելի հարուստ նահանգներում։

ՓԱՐԻԶ, 3 հոկտեմբերի։ Ասում են, որ մինիստրների խորհուրդը դտնում է, որ Բուլանժէին տուած պատիժը բաւական չէ։ Մտադրութիւն կայ տեղափոխել նրան պաշարի զօրքի մէջ։ Լրագիրներից շատերը հաւանութիւն են տալիս այն միջոցներին, որոնք գործ են դրվում Բուլանժէի դէմ։ Բիւդժէտային յանձնաժողովում յայտնված է, որ Բուլանժէ, պատերազմական մինիստր եղած ժամանակ, ծախսեց առանց ազգային ժողովի համաձայնութեան, ուրեմն ապօրինի կերպով 8 միլիօն ֆրանկ ցամաքային զօրքի հագուստի վրա։ Երէկ Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտէտի ուսանողները ազմկալի ցոյցեր արին ընդդէմ մի տիկնոջ, որը պէտք է նոյն ֆակուլտէտում հարցաքննութիւն տար։ Այդ աղմուկների պատճառով ստիպված եղան յետաձգել հարցաքննութիւնները։

ԼՕՆԴՕՆ, 3 հոկտեմբերի։ Երէկ անգործ մնացած բանւորների ամբոխը ներկայացաւ Լորդ-մէրին, բայց այդ վերջինը չընդունեց բանւորներին։ Այն ժամանակ բանւորների բազմութիւնը ուղեւորվեց դէպի «Standard» պահպանողական լրագրի խմբագրատունը, և սկսեց խմբագրատան առջև աղմուկներ հանել, մինչև որ չը ցրվեցաւ ոստիկանութեան ոյժով։

ՎԻԷՆՆԱ, 3 հոկտեմբերի։ Երէկ Նիշ-Պիրօտեան երկաթուղու այն դծի վրա, որ հասնում է մինչև Բօլղարիայի սահմանը և Վրանիայից մինչև Թիւրքայ սահմանը, սկսվեցաւ երթևեկութիւնը։ Երկաթուղու թիւրքայ բաժինը սերբիական սահմանից մինչև Ուսկիւբ նոյնպէս աւարտված է։ Այդպիսով բացվում է այժմ երկաթուղային հաղորդակցութիւնը Վիէննայից Բելգրադի վրայով մինչև Սալոնիկի։

ԿԼԷՐՄՕՆ, 3 հոկտեմբերի։ Գեներալ Բուլանժէ արդէն կալանաւորված է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 հոկտեմբերի։ Թուրքէստանի 4-որդ բրիգադայի գլխաւորը, Կօրօլկով նշանակված է զինուորական նահանգապետ Ֆէրգանեան շրջանի, գեներալ Իվանովի փոխանակ, որը հիւանդութեան պատճառով հրաժարական է տուել։

ՄԷՐՎ, 4 հոկտեմբերի։ Էիւբ-խանը ապստամբների գլուխ կանգնեց։ Ռուս-աւգանական սահմանի վրա ապստամբվեցաւ և Էիւբ-խանի կողմն անցաւ ֆիրուզկուհեան ցեղը։ Փախստականները դէպի Պէնդէ պատմում են, որ Էիւբ-խանի կուսակիցները եռանդուն կերպով պատրաստում են ապստամբութիւնը Հերաթում և Աւգանական Թուրքեստանում։

ՓԱՐԻԶ, 4 հոկտեմբերի։ Արդարադատութեան մինիստրը հաղորդեց պատերազմական մինիստրին, որ բացի Կաֆարելից և Անդլօից ոչ ոք զինուորականներից խառն չէ պատանչանների առեւտրի գործում։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 4 հոկտեմբերի։ Ուրբաթ օր, երբ նախագահ Կլէվելէնդ անցնում էր երկաթուղով Արկանզաս նահանգում, առաջ գնացող լոկոմոտիվի մեքենապետը նկատեց որ փայտեայ շինուածքի մի մասը, որի վրա դրված են երկաթուղու ռէլսները՝ այրվում է։ Կրակը շուտով հանգցրին։ Կատարված քննութիւնը ցոյց է տալիս որ կրակը մտադրութեամբ էին դցել, քանի որ ուղիղ փայտեայ շինուածքները միաժամանակ սկսել էին այլ և այլ տեղերում այրվել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 հոկտեմբերի։ Կալուածական հարկի չափը բարձրացնելու ենթադրութեան վերաբերմամբ լրագիրները հաղորդում են, որ այդ հարկի բարձրացնելը կը կատարվի հետևեալ չափով։ 1/4 մինչև 3/4 կոպէկ դեսիատինից՝ Վօլոգդի, Նովգորոդի, Օլոնեցկի և Օրէնբուրգի նահանգներում. 1 մինչև 2 կոպէկ՝ Վիլնօի, Վիտեբսկի, Գրոդնոյի, Կոստրոմայի, Մինսկի, Մոգիլեվի, Նիժէգորոդի, Պսկովի, Սամարայի, Պետերբուրգի, Սմոլենսկի, Տօմսկի, Տուլայի, Խէրսոնի և Էստլանդիայի նահանգներում. 5 կոպէկ Լիֆլիանդիայի և 6 կոպէկ Կուրլիանդիայի նահանգներում։

ՓԱՐԻԶ, 5 հոկտեմբերի։ Պատերազմական մինիստրը ուղևորվեց Նանսի, արեւելեան սահմանը նայելու և նոր կազմակերպված հետեակ գնդերի զօրահանդէս անելու։

ՍՕՖԻԱ, 5 հոկտեմբերի։ Երէկվայ կատարված ընտրութիւնների հետևանքները կառավարութեանը առհասարակ նպաստաւոր յայտնվեցան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 2-ին

Ռուսաց 1 բուբլ	Լօնդօնի վրա արժէ	$21^5/_{16}$	պէնս.
— —	Համբուրգի վրա —	$180^5/_8$	պֆ.
— —	Փարիզի վրա —	$225^1/_4$	սան.
Ոսկի —	արժէ — հինը —	› —	կ.
— —	— — նորը	8 › 96	›
Մաքսային կուպօններ	— . .	179 › —	›
Արծաթ —	— — . . .	1 › 30	›
Բօրսային դիսկօնտներ	— .	$5^1/_2$ ›	$7^0/_0$ ›
Պետակ. բանկ. $5^0/_0$ տոմս 1-ին շրջանի		99 › 25	›
— — — — 2-րդ —		98 › 87	›
— — — — 3-րդ —		98 › 62	›
— — — — 4-րդ —		98 › 62	›
— — — — 5-րդ —		98 › 62	›
— — — — 6-րդ —		— › —	›
Արևելեան $5^0/_0$ փոխառութ. 1-ին շրջ.		97 › 25	›
— — 2-րդ —		97 › 25	›
— — 3-րդ —		97 › 25	›
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.		264 › —	›
— երկրորդ —		242 › —	›
$5^1/_2{}^0/_0$ րէնտա		102 › 50	›
Ոսկեայ րէնտա		193 › 25	›
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն		164 › —	›
Նոր երկաթուղային րէնտա . . .		98 › 75	›
$5^0/_0$ գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		166 › 50	›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .		98 › —	›
$5^1/_2{}^0/_0$ գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.		102 › —	›
$6^0/_0$ գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.		102 › —	›
— — Պոլտավայի —	—	102 › —	›
— — Պետ. Տուլսկ. —	—	102 › —	›
— — Կիեւի —	—	102 › —	›
— — Մոսկվայի —	—	102 › —	›
— — Բեսարաբ. Տավր. —		102 › —	›
— — Նիժ. Սամար.	—	102 › —	›
— — Վիլնայի	—	102 › —	›
— — Թիֆլիսի —	27 և 43 տ.	99 › —	›
— — Բուենոս-Այրեսի	18 և 43 տ.	99 › 50	›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները		708 › —	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		266 › 50	›
Բիբինսկ-Վոլգոգրադի ընկ.		83 › 50	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		94 › —	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		96 › —	›
Օդէսայի — — .		94 › 75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .		83 › 75	›
Նոր փոխառութիւն.		82 › 75	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը շատ թոյլ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ բժշկապետ Գրիգոր Գասպարեան Տէր-Գրիգորեանցի Ղզլարեցւոյ

„ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ“

Ծախվում է կենտրոնական դրավաճառանոցում և հեղինակի բնակարանում։
Ստարо-Ինստիտուտսկայա, համար 19.
Գինն է 50 կոպէկ։

1—6

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ։

Ուրբաթ, 9/21 հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ DONNAY (ԴՕՆՆԷ) մտնելով կ. Պօլիս, Զմիռնիա և Սիրա և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ։

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ պ. Դ. ԷՍՍԷՆԺԷՐԻՆ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑԻՆ։

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, հոկտեմբերի 14-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունի գալլերէում, № 103.

3—4

EXPORTATION-IMPORTATION

CONSTANTIN P. CHÉHIANTZ

MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. Շեհեանցի առևտրական գրասենեակը լինելով ՄԻԼԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվէյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկանտների հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝ մետաքս, բօժօժ, մետաքսի և բօժօժի մնացորդք, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում։ Յանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար։ Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար դրել այս հասցէով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) МИЛАНЪ (Италія).

Дозволено цензурою, Тифлисъ 5 октября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.